Սնանկության գործ
№ ՍԼԴ/2771/04/23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Պարտապանին պատկանող գույքի վաճառքը թույլատրելու մասին

2024թ. հուլիսի 30-ին

ՀՀ սնանկության դատարանը՝ նախագահությամբ դատավոր Արմեն Խաչատրյանի, ուսումնասիրելով Արսեն Ազատի Ղուկասյանի սնանկության գործի նյութերը, քննության առնելով սնանկության գործով կառավարչի միջնորդությունը՝ պարտապանի գույքի վաճառքը թույլատրելու մասին.

Պ Ա Ր Զ Ե Ց

Արսեն Ազատի Ղուկասյանի ներկայացուցիչ, փաստաբան Մարիամ Սիմոնյանը (լիազորագիր՝ տրված 07.03.2023թ., փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 3136, նույնականացման քարտ՝ 009459934, տրված՝ 07.08.2018թ., 018-ից) 04.09.2023թ. դիմում է ներկայացրել ՀՀ սնանկության դատարան (այսուհետ՝ Դատարան)՝ Արսեն Ազատի Ղուկասյանի սնանկությունը ճանաչելու պահանջով: Դատարանի 07.09.2023թ. որոշմամբ դիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանի կողմից 18.09.2023թ. կայացված վճռով Արսեն Ազատի Ղուկասյանը ճանաչվել է սնանկ, իսկ 27.09.2023թ. որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Գևորգ Ավագյանը (այսուհետ՝ Կառավարիչ):

Դատարանի 11.12.2023թ. որոշմամբ հաստատվել է Արսեն Ղուկասյանի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը, իսկ պարտատերերի առաջին ժողովը նշանակվել է 15.01.2024թ.:

11.07.2024թ-ին Կառավարիչը պարտապանի գույքի վաճառքը թույլատրելու մասին միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ պատճառաբանությամբ, որ իր կողմից գույքագրվել են պարտապան Արսեն Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Լոռու մարզի Սպիտակ համայնքում գտնվող թիվ 06-006-0189-0005 կադաստրային ծածկագրով հողամասը (այսուհետ՝ Թիվ 1 Գույք), ՀՀ, Լոռու մարզի Սպիտակ համայնքում գտնվող թիվ 06-006-0185-0005 կադաստրային ծածկագրով հողամասը (այսուհետ՝ Թիվ 2 Գույք) և «VAZ 21074» մակնիշի, XTA21074082750641 նույնացման համարով, 2008թ. արտադրության ավտոմեքենան (այսուհետ՝ Թիվ 3 Գույք): Ըստ «ՈՒՆԻԿՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 12.06.2024թ. տրված թիվ 30/5-2, թիվ 30/05-4 և թիվ 30/5-3 գնահատման հաշվետվությունների՝ 12.06.2024թ. դրությամբ Թիվ 1 Գույքի շուկայական արժեքը կազմում է 280.000 ՀՀ դրամ, Թիվ 2 Գույքի շուկայական արժեքը՝ 550.000 ՀՀ դրամ, իսկ Թիվ 3 Գույքի շուկայական արժեքը՝ 160.000 ՀՀ դրամ:

Պարտապանի գույքի գույքագրման ու գնահատման արդյունքների հիման վրա իր կողմից կազմվել է պարտապան Արսեն Ղուկասյանի գույքի վաճառքի ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), ըստ որի նախատեսվել է Թիվ 1, Թիվ 2 և Թիվ 3 Գույքը վաճառել հրապարակային սակարկությունների միջոցով՝ վաճառքի համար մեկնարկային գին սահմանելով «ՈՒՆԻԿՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից նշված շուկայական արժեքի չափով: Ծրագիրը հաստատելու համար իր կողմից 26.06.2024թ. հրավիրվել է Արսեն Ղուկասյանի պարտատերերի ժողով, և վերջինիս որոշմամբ Ծրագիրը հաստատվել է: Կառավարիչը Դատարանից խնդրել է թույլատրել հրապարակային սակարկությունների միջոցով, երեք

առանձին լոտերով վաճառել պարտապան Արսեն Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող Թիվ 1, Թիվ 2 և Թիվ 3 Գույքը:

Ուսումնասիրելով գործի նյութերը՝ Դատարանը գտնում է, որ միջնորդությունը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի վաճառքն իրականացնում է կառավարիչը՝ իր կողմից գույքագրման արդյունքներով ներկայացված և պարտատերերի խորհրդի, իսկ խորհուրդ ձևավորված չլինելու դեպքում պարտատերերի ժողովի կողմից հաստատված գույքի վաճառքի ծրագրի համաձայն և դատարանի թույլտվությամբ՝ հրապարակային սակարկություններով կամ ուղղակի գործարքով: Նույն հոդվածի 1.1 մասի համաձայն՝ գույքի վաճառքի ծրագիրը պետք է ներառի պարտապանի ամբողջ գույքի, ներառյալ՝ պահանջի իրավունքների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ (անվանումները, նկարագրությունը, քանակը, հաշվեկշռային արժեքը), վաճառքի նախատեսվող ձևը, նախնական գնահատված արժեքները՝ ըստ գույքի տեսակի: Գույքի վաճառքի ծրագիրը պարտատերերի խորհրդի կամ ժողովի կողմից չհաստատվելու դեպքում կառավարիչն իրավունք ունի դիմելու դատարան և պահանջելու հաստատել գույքի վաճառքի ծրագիրը՝ կցելով պարտատերերի ժողովի կամ խորհրդի որոշումները կամ ժողովի կամ խորհրդի նիստի անցկացման անհնարինության հիմքերը: Ծրագրի փոփոխությունները կատարվում են ծրագրի ընդունման համար սահմանված կարգով:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու իր միջնորդությունը կառավարիչը ներկայացնում է դատարան՝ այդ մասին երեք օր առաջ տեղեկացնելով պարտատերերին սույն օրենքի 34-րդ հոդվածի առաջին մասով սահմանված կարգով: Միջնորդության մեջ նշվում են գույքի գտնվելու վայրը, գույքի նկարագրությունը, աճուրդի առաջարկվող մեկնարկային գինը, աճուրդի անցկացման օրը: Միջնորդությանը կից ներկայացվում է գույքի գնահատման ակտը (անկախ գնահատողի կողմից գնահատված լինելու դեպքում՝ եզրակացությունը): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտատերերն իրավունք ունեն հրապարակային սակարկություններով պարտապանի գույքի վաճառքը թույլատրելու մասին կառավարչի միջնորդության դեմ յոթնօրյա ժամկետում գրավոր առարկություն ներկայացնելու դատարան և առաջարկելու աճուրդի ավելի բարձր մեկնարկային գին՝ գույքի վաճառքի իր կողմից առաջարկվող մեկնարկային գնի 5 տոկոսի, բայց ոչ ավելի, քան հինգ միլիոն դրամի չափով դեպոզիտ վճարելով սնանկությանհատուկ հաշվին: Առարկությանը կցվում է դեպոզիտի վճարումը հավաստող փաստաթուղթը: Եթե առարկություն են ներկայացրել մեկից ավելի պարտատերեր, ապա հրապարակային սակարկություններով գույքի իրացումը թույլատրվում է առաջարկվող ամենաբարձր մեկնարկային գնով: Նույն հոդվածի 3-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառավարչի միջնորդությունն ստանալու ութերորդ օրը դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝ գույքի վաճառքը թույլատրելու մասին՝ բավարարելով կառավարչի միջնորդությունը, եթե որևէ պարտատեր սույն հոդվածի երկրորդ մասով սահմանված ժամկետում և կարգով առարկություն չի ներկայացրել դատարան:

Տվյալ դեպքում Կառավարչի կողմից գույքագրվել է Արսեն Ղուկասյանին պատկանող Թիվ 1, Թիվ 2 և Թիվ 3 Գույքը, որոնց շուկայական արժեքը որոշվել է «ՈՒՆԻԿՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից և տրվել է շուկայական արժեքի վերաբերյալ գնահատման հաշվետվություններ: Պարտապանի գույքի գույքագրման ու գնահատման արդյունքների հիման վրա Կառավարչի կողմից կազմվել է պարտապանի գույքի վաճառքի ծրագիրը, ըստ որի նախատեսվել է Թիվ 1, Թիվ 2 և Թիվ 3 Գույքը վաճառել հրապարակային սակարկությունների միջոցով, երեք առանձին լոտերով՝ վաճառքի մեկնարկային գին սահմանելով «ՈՒՆԻԿՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից նշված շուկայական արժեքների չափով, իսկ այդ Ծրագիրը հաստատվել է Արսեն Ղուկասյանի սնանկության գործով պարտատերերի ժողովի 26.06.2024թ. որոշմամբ:

Վերը նշվածից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ պարտապանի գույքի վաճառքը թույլատրելու մասին Կառավարչի միջնորդությունը հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ այն Կառավարչի կողմից ներկայացվել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի ու 76-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների պահպանմամբ, միջնորդությանը կից Կառավարչի կողմից Դատարան է ներկայացվել վաճառքի ենթակա գույքի շուկայական արժեքի վերաբերյալ «ՈՒՆԻԿՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից տրված մասնագիտական եզրակացությունները, պարտատերերը պատշաճ կարգով տեղեկացվել են պարտապանի գույքը վաճառելու վերաբերյալ Կառավարչի միջնորդությանը, սակայն օրենքով սահմանված ժամկետում առարկություն չեն ներկայացրել:

Վերը նշվածից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ պարտապան Արսեն Ղուկասյանին պատկանող գույքը վաճառելու թույլտվություն տալու մասին Կառավարչի միջնորդությունը ենթակա է բավարարման և պետք է թույլատրել Կառավարչին «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հրապարակային սակարկություններով վաճառել միջնորդությունում նշված գույքը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ, 76-րդ հոդվածներով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ, 200-րդ հոդվածներով՝ Դատարանը.

ՈՐՈՇԵՑ

Թույլատրել Արսեն Ազատի Ղուկասյանի սնանկության գործով կառավարչին «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածով և ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ. թիվ 116-Ն հրամանով սահմանված կարգով հրապարակային սակարկությունների միջոցով, երեք առանձին լոտերով վաճառել հետևյալ գույքը.

Լոտ 1՝ ՀՀ, Լոռու մարզի Սպիտակ համայնքում գտնվող թիվ 06-006-0189-0005 կադաստրային ծածկագրով հողամաս, մեկնարկային գինը՝ 280.000 (երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Լոտ 2՝ ՀՀ, Լոռու մարզի Սպիտակ համայնքում գտնվող թիվ 06-006-0185-0005 կադաստրային ծածկագրով հողամաս, մեկնարկային գինը՝ 550.000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Լոտ 3՝ «VAZ 21074» մակնիշի, XTA21074082750641 նույնացման համարով, 2008թ. արտադրության ավտոմեքենա, մեկնարկային գինը՝ 160.000 (մեկ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Աճուրդի անցկացման օր նշանակել իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլի միջոցով և www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում գույքի օտարման մասին վերջին հայտարարության հրապարակումից հետո՝ 15 օրից ոչ շուտ:

Աճուրդն անցկացնել հետևյալ հասցեներից որևէ մեկում՝

- ք.Երևան, Արշակունյաց պողոտա 5 շենք, թիվ 311 սենյակ,
- Լոռու մարզ, ք.Վանաձոր, Վարդանանց փող., թիվ 17:

Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ